# ՀԱՏՈՒԿ ԳՈՒՆԴԸ ԲԱՑԱՌԻԿ ԴԵՐ ԿԱՏԱՐԵՑ...

Սամուել ՄԱՄՅԱՆ







ՀՀ պաշտպանության նախարարության եւ «Հատուկ գնդի վետերանների միություն» հասարակական կազմակերպության համատեղ նախաձեռնությամբ սեպտեմբերի 20-ին նշվեց Հատուկ գնդի կազմավորման 10-րդ տարեդարձը:

Նախքան հանդիսավոր արարողությունն սկսելը հանդիսության մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին մեր ազգային ազատագրական պայքարում իրենց կյանքը հայրենիքին նվիրաբերած հայորդիների հիշատակը:

Ողջունելով հանդիսավոր արարողության մասնակիցներին՝ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Միքայել Հարությունյանը շնորհավորեց բոլորին՝ հայկական բանակի առաջին ստորաբաժանման կազմավորման 10-րդ տարեդարձի կապակցությամբ եւ անդրադարձավ մեզ համար բախտորոշ ժամանակահատվածում գնդի դերին ու նշանակությանը:

10 տարի առաջ, այս օրերին, կանխազգալով երկրի անվտանգությանն սպառնացող վտանգները, ելնելով երկրի ներքին քաղաքական վիճակից, Հայաստանի նախարարների խորհուրդը որոշում ընդունեց՝ ստեղծել կանոնավոր զորամիավորում, դրանում միավորելով կամավորական բոլոր ջոկատներն ու ազատամարտիկներին: Վազգեն Սարգսյանի նախաձեռնությամբ ստեղծվեց այդպիսի գունդ:

Նախարարների խորհրդի որոշումն ընդունվեց 1990թ. սեպտեմբերի 13-ին: Սեպտեմբերի 20-ին ներքին գործերի նախարարությանն առընթեր ստեղծվեց հատուկ գունդ: Հոկտեմբերի 5-ին գնդում տեղի ունեցավ երդման առաջին հանդիսավոր արարողությունը: Կարճ ժամանակահատվածում գունդը համալրվեց 29 մարտական եւ 19 պահեստային վաշտերով: Գնդում ընդգրկվեց 2000 զինվոր: Առաջին զենքը գունդը ստացավ 1990թ. սեպտեմբերին:

—Եթե չլիներ այդ զորամասը, նրա անձնակազմի տարած փառապանծ հաղթանակները, մեզ պարտադրված պատերազմը կձգձգվեր անորոշ ժամանակով, եւ վտանգի կենթարկվեր հայոց պետականության կայացումը,—իր ելույթում այդպիսի գնահատական տվեց գեներալ-լեյտենանտ Միքայել Հարությունյանը:

Հայոց բանակի առաջին ստորաբաժանումը մասնակցեց Իջեւանի, Նոյեմբերյանի, Կրասնոսելսկի, Կապանի, Արծվաշենի, Շահումյանի, Մարտակերտի եւ Լաչինի պաշտպանությանը, Ջեբրայիլի, Կուբաթլուի, Քելբաջարի եւ Զանգելանի ազատագրմանը: 1994թ. հունվարից մինչեւ 1997թ. գունդը պաշտպանել է մեզ համար բացառիկ նշանակություն ունեցող Օմարի լեռնանցքը: Փայլուն կատարելով իր մարտական առաջադրանքները՝ գունդը ջախջախեց հակառակորդի՝ թվով իրեն գերակշռող ուժերը, աջակցելով Լեռնային Ղարաբաղի տարածքային ամբողջականության եւ Հայաստանի սահմանների պաշտպանությանը:

Մարտական գործողությունների ընթացքում, մինչեւ 1994 թ., գնդի վաշտերի 29 հրամանատարներից 6-ը զոհվեցին: Գունդը մի քանի տասնյակ զոհեր տվեց:

Հետագայում նրանցից շատերը արժանացան Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական պարգեւների, իսկ Ջիվան Աբրահամյանին հետմահու շնորհվեց Ազգային հերոսի կոչում: Իսկ զորամասին, ցուցաբերած արիության համար, տրվեց հատուկ անվանում: Հատուկ գունդը առաջիններից մեկն էր, որին հանձնվեց մարտական դրոշ:

Գնդի կազմավորման, երկրի սահմանների պաշտպանության առումով գնահատանքի խոսքեր հնչեցին գնդի հրամանատարներ Սերգեյ Առաքելյանի, Աշոտ Պետրոսյանի, Վլադիմիր Կարապետյանի, Գագիկ Մելքոնյանի, Համլետ Հովհաննիսյանի եւ Ալբերտ Գալստյանի հասցեին:

Գունդը մեծ ներդրում ունեցավ նաեւ երկրի ներսում կարգ ու կանոնի պահպանման հարցում եւ ամենակարեւորը՝ Հատուկ գունդը դարձավ այն հենքը, որի վրա պիտի կառուցվեր հայոց ազգային բանակը: Պիտի կառուցվեր անձնազոհության, անձնվիրության եւ մարտունակության այն օրինակով, որ դրսեւորեցին գնդի մարտիկներն այդ դժվարին, ծանր տարիներին: Այսօր էլ նրանցից շատերը համալրում են ազգային բանակի շարքերը եւ այսօր էլ նրանք բոլորը պատրաստ են անհրաժեշտության դեպքում կրկին ոտքի կանգնել՝ ի պաշտպանություն հայրենի հողի եւ ժողովրդի: Այդ պատրաստակամության արտահայտությունն էր Հատուկ գնդի վետերանների՝ ըստ վաշտերի հանդիսավոր, խրոխտ քայլերթը, որին առանձին վաշտեր մասնակցում էին 7-8 հոգով... Շարքերից բացակայողների հիշատակի առջեւ խոնարհվեցին բոլորը՝ վետերաններից մինչեւ այն փոքրիկ աղջնակը, որի հայրը հետմահու արժանացել էր պարգեւի:

ՀՀ նախագահի հրամանագրով ՊՆ Հատուկ գնդի մի շարք զինծառայողներ պարգեւատրվել են Արիության եւ Մարտական ծառայության մեդալներով: Երկու մեդալները հանձնվեցին Հատուկ գնդի վետերաններին:

ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ի նշանավորումն Հատուկ գնդի ստեղծման 10-րդ տարելիցի եւ ծառայողական գործունեության ու մարտական պատրաստության բարձր ցուցանիշների համար մի խումբ զինծառայողներ պարգեւատրվեցին «Մարշալ Բաղրամյան» մեդալով, թանկարժեք նվերներով, ամսական պաշտոնական դրույքաչափերով եւ պատվոգրերով:

Մարտական սխրանքի եւ արմատական բանակաշինության համար մահապարտների գնդի ղեկավարությունը ՀՀ ՊՆ 4-րդ գնդի ողջ անձնակազմին պարգեւատրեց պատվոգրերով եւ կրծքանշաններով:

Հանդիսության մասնակիցները ծաղկեպսակ եւ ծաղիկներ դրեցին մայրաքաղաքային գնդում Հատուկ գնդի զոհերի հիշատակին կանգնեցված հուշակոթողին:

Լուսանկարները՝
Վիլիկյա Ալեքսանյանի